# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մեր սիրասուն զավակներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ Երեխաների օրհնության օրվա առիթով, որը լուսավոր ու պայծառ է Ծաղկազարդի Տերունական փոնի հոգենորոգ խորհրդով:

Ինչպես ժողովուրդն ընդառաջ ելավ ու ողջունեց Հիսուսին կանաչ ճյուղերով, նույնպես այսօր դուք ձեր ծնողների ու հարազատների հետ ծաղկած ճյուղեր առած, զվարթ հոգով և աղոթքը ձեր շուրթին գնում եք եկեղեցիներ՝ ստանալու օրհնությունը Քրիստոսի՝ մեր Փրկչի ու Տիրոջ:

Արդարև, մեր Տերը շատ է սիրում երեխաներին: Աստծո առջև գնահատելի մեծ զանձ են մանկական հոգու անմեղությունն ու բարությունը: Սուրբ Ավետարանի պատմությանց մեջ Հիսուս հաճախ է պատվիրում մեծերին՝ լինել մանուկների նման, որպեսզի աշխարհում առատանան մաքուր հոգու բարի արգասիքները: Ձեր կյանքի բոլոր օրերում հավատացեք ու վստահեք Աստծուն, հավատարիմ եղեք աստվածատուր պատվիրաններին, բազմացրեք ձեր հոգու գանձերը, և երկնային շնորհները միշտ ուղեկից կլինեն ձեզ, ու ձեր ընթացքը՝ անսայթաք:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ համայն մեր ժողովուրդը՝ մեծ ու մանուկ, միշտ բանուկ պահեն դեպի մեր սուրբ տաճարները տանող ճանապարհները, միշտ նորոգ ու զորացյալ՝ մեր հայրերի սուրբ հավատն ու ավանդները, և հայոց հողից ու հայ հոգիներից աղոթքը անդադար բարձրանա երկինք:

Սիրելի զավակներ, թող Բարին Աստված միշտ ձեզ հետ լինի, ձեր ծնողաց ու հարազատների հետ պահի ու պահպանի ձեզ Իր ամենախնամ Աջի հովանու ներքո այսօր և միշտ: Ամեն:

Ս. Էջմիածին,
4 ապրիլի 2004 թ.